Ալանաղանի բացասական պատասխանից յետոյ եւս չկարողացաւ Ցունաց երկիրը փախչել։ Սակայն միայն սորա համար չէ, որ մեր Արշակի եւ Ալանաղանի բանակցութիւնները հակապատմական ենք համարում. ըստ միաբերան վկայութեան Փաւստոսի եւ Ամմիանոսի՝ Արշակը մինչեւ վերջին րոպէին սուրը ձեռքին իւր գահն եւ հայրենիքը պաշտպանելով, ապա ստիպուած, հաւատալով Շապուհի հրապուրանքներին, անձնատուր է լինում[1]։

Ապա խորենացին Փաւստոսի հետեւեալ (Դ, ԺԳ) գլուխը բաց թողնելով, (Դ, ԼԲ) համառօտում է Փաւստոսի ԺԵ—ԺԷ գլուխները։ Բոլոր փոփոխութիւնները, որ մեր սահմանափակ պատմագիրը Փաւստոսի պատմութեան մէջ մտցնում է, անպատաւաբեր են Հայոց համար։ Այսպէս նա չէ յիշում Փառանձեմ տիկնոջ 14 ամեայ[2] հերոսական պաշտպանութիւնն Արտագերից ամրոցում։ Սորա փոխանակ խորենացին գրում է. "Ապեւ ոչ դշխոյն Փառանձեմ գնաց ի կոչ առն իւրոյ, այլ հանդերձ գանձիւք անկաւ յամուրս Արտագերից. լուր առնելով առ որդին իւր Պապ, յուսայր ապրել ի ձեռաց Շապհոյ... Բայց թիւրիմացեալն Աստուծոյ եր ի վերայ Արշակայ[3]. մարդիկ ամրոցին ոչ անասցին մնալ համաւորն Պապայ, այլ անձնատուր եղին ի կամաց եւ ոչ ի բռնութենէ"։ Ըստ Փ.ի Արտագերսի անկման պատճառը ամրականների միջեւ ծագած սարսափելի ժանտախտն է լինում, որի համար նա ասում է. "Եւ եղեւ յետ չարքաշասաներորդ ամսեանն հարուածոց, որ յԱստուծոյ հասն ի վերայ ցողմոխանին թիւրդենոցդեցոյն. զի մահանկաւ ի վերայ նոցա՝ որք ի բերդին էին, չի ի տեսանի հասն զաստուհասէ։" Այս Փ.ի այս պատճառաբանութիւնն է, որ խոր. այնպէս յեղաշրջել է։ Իսկ խոր. այն խօսքերը, թէ "գիտացին նոխաբարք Հայոց, այնք՝ որ նախ քան զԱրշակ ձեռն տուեալ էին ի Շապուհ, թէ եւ զնոցա կանոյն ինդրէն, որդեա զանոյնչի, որք առ Արշակայ միամիտք էին... առեալ զնոսայ ի ազգէն փաղեան յաշխարհն Ցունաց" յօրինուած են Փ.ի պատմութեան վերայ, ուր ասած է, թէ երբ Շապուհը Հայաստան եկաւ, "բազումք ի նոխաբարացն Հայոց թողուին զնոսայ ի բերանց ի ազգէն ի ազգանէս, եւ փախեան ընդ այս ընդ այն գնացին։ Իսկ զամենայն կանայս նոխաբարացն Հայոց, զոր թողին եւ փախեանն, ասպարսն ի ծոցովք. եւ ածին զնոսա առ Շապուհ արքայ Պարսից։"

Այնուհետեւ խոր. ինչպէս Փ. նկարագրում է հայ հրեաւնակ քաղաքների աւերումն Պարսիկների ձեռքով։ Բայց չգիտեմ նորա համառօտամտութեան թէ անհերելի անհոգութեանը վերագրել այն յապաւումն, որ նա այստեղ անում է. նա Փ.ի յիշած Եմիք քաղաքներից (Արտաշատ, Վաղարշապատ, Զարեհաւան, Զարեշատ, Վան որ է Թաւորին Ցոլեայ, Նախիջեւան) միայն երեքն աւերումն է յիշում (Վան Ցոլայ, Արտաշատ, Վաղարշապատ)։ Նոյնպէս Արշակի ինքնասպանութեան պատմութիւնը խոր. վերցրել է Փ.ից ("Աղաղիբ որոշ ընդ անձն ի բերան" ասում է համառօտամտ պատմագիրը։ Տես Ա. Թղթ. լա, 4)[1]։

(Շարունակելի։) *Ե. ԴԱՂԲԱՇԵԱՆ*

ՄՈՎՍԷՍ ԽՈՐԵՆԱՑՈՒ ՆԱՐԿԱՅԱՑ ԱՂԲԻՒՐՆԵՐԻ ՄԱՍԻՆ*

(Շարունակութիւն։)

Ուշադիր արժանի է աշխատութեան՝ խորենացու փոխառութեան միւս դէպքը։

Ս. Սեղբեսարեսի (Ընդարձակ) վարքի հեղինակը՝ իւր գրուածքի սկզբում (էջ 698—699), նուիրում է մի հակիրճ, բայց դեղեցիկ նկարագիր այդ քահանայապետի հոգեւոր եւ բարոյական առաքինութիւնների, որոնց միայն ընդհանուր իմաստն է հաղորդում Համառօտ վարքը[2]

---

1 Արշակ իւր նոխաբարներից բարձի թաղ Ցունաց, ստիպուում է Շապուհից երդում խնդրել, "զի յոյժմահեան անկական երթիցէ առ նոսա եւ ապա անձնատուր է լինում" (Փաւստոս, Դ, ԺԳ)։ Համարեա թէ նոցնն է ասում եւ հեռագիրն պատմագիրը։ "Dein per exquisitas percuriisque mixtas inlecebras captum regem ipsum Arsacem adhibitumque in convivium iussit ad latentem trahi postieam, etc. (Ammian, XXVII, 12, 3)։

2 368 թ. հկտ. մինչեւ 369 գեկտ.։

3 Ուրբան պէսք է կարմրեր մեր "Հայրենասիրը, պատմագիրը, եթէ գիտենար այն ոգերգը, որ մի օտար գրիչ նուիրում է մեր քաջ եւ անձնուէր, բայց դժբախտ թագաւորին, որի մէջ ներարգասում է նորա հայրենասիրութիւնը, խորտակուած յոյսերն եւ հոգեկան դառն վշտերը ("Հանդէս" 1887 Փետրաւար, եր. 25)։

1 Սարգսով միւնոյն ժամանակ խոր. հակասում է Փ.ին, քան սրում Արշակ մեռաւ Պապի գահակալութիւնից յետոյ, մաս. 370 թուին (Մարքարտ, Zur Krit. et. p. 221)։

* Յօդուածս նախընթաց մասին մէջ էջ 289ը տող 15 կարդա՝ "տպագրութիւնն էլ (բաց առնելով...) որպէս եւ թուղթը վատ չեն"։ էջ 292ը տ. 21 կարդա՝ "ոմանքանական նիւթ"։ ԽՄԲ.

2 Ահաւասիկ Փ. Սոկրատի (կամ որ նոյնն է՝ Համառօտ վարքի) նկարագիրը. "...պարզեալ ի գիրեսասի ընծայեր ի քահանայութիւն վիճակս, որպէս եւ վայելէր։ Եւ գիրասպիտեալ եւ վայելչացեալ այրն ճանաչիւք ի ժառանգաւորս եկեղեցւոյն Հռովմայ. վերագոյն քան արդարութեան աւետարանին յանապատ յամենեցունցն՝

digitised by A.R.A.R.@

"Երեսնամեայ ահայ ամաց էր, յորժամ ի սրբոյն Մեղեսիադէ ի սարկաւագութեանն նախաձեռնարկեցաւ պատիւ ամենայնի ապա պատուով ուրախացեալ եւ բարեվայելչացեալ եան զբոլոր վիճակաւորսն։ Վասն զի ամբարտաւանութիւն եւ մարդահաճոյութիւն աւ է նոցա վրա տեղի գտանել ալ սրեր կարացին։„ — "գործով սուրբ.„ — հետաքրքրական է եւ τῷ σώματι ἐρρωμένος = "մարմնով արդեամբ։„, թէպէտ ἐρρωμένος իսկապէս զօրեղ, ուժեղ է նշանակում (ῥώννυμι), իսկ "արտաքայլեալ„ ձեւի համար գուցէ ἐκλάμπων կամ նման մի բառ սպասելու էր յոյն բնագրում ինչպէս որ փոքր ինչ ներքեւ յոյնի „ἐκλάμπειν" (էջ 35) հայը արդարեւ "արտաքայլել„ է թարգմանել (էջ 736)։ Նկատենք վերջապէս, որ Ընդարձակ վարքը ունի մի պարբերութիւն — "Երեսնամեայ ահայ ամաց էր... եւ բարեվայելչացեալ քան զբոլոր վիճակաւորսն„ —, որ պակասում է յոյն բնագրում (ըստ հրատարակութեան Արժ. Հ. Բ. Սարգիսեանի, էջ 7)։

Հիմա դառնանք Խորենացուն։ Սա՝ իւր Գրքի 67ոդ գլխում "Փոխումն յաշխարհէ Սահակայ եւ Մեսրոպայ երանելւոյ„, գլխաւորելով այդ երկու մեծ մարդոց գործունէութիւնը, տալիս է մեզ նոյն անձնաւորութիւնների բարոյական պատկերը — համառօտ՝ Սահակի մասին եւ փոքր ինչ ընդարձակ՝ Մաշտոցի մասին։ Արդ՝ վերջինիս նկարագրի մէջ գտնում ենք բացի փոխ է առել Խորենացին Սեղբեստրոսի Ընդարձակ վարքի վերոյիշեալ հատուածից՝ իրեն յատուկ ճարտարութեամբ յարմարցնելով Հռոմի հայրապետին վերագրած բարեմասնութիւնները Հայոց մեծ վարդապետին։ — պէտք է միւնոյն ժամանակ նկատել, որ փոխառած հատուածը այնպէս սերտ եւ անանջատ կապակցութիւն ունի ամբողջ 67ոդ գլխի հետ, որ անկարելի է բաց թողնել այդ տողերը՝ առանց զգալի կերպով վնասելու Մաշտոցի պատմութեան հետեւողութեանը եւ նոյն գլխի ընդհանուր բովանդակութեան։ Ապա ուրեմն ուրիշներից յետ ժամանակի ներմուծուած համարել նորան բնաւ կարելի չէ։

Ահա եւ Խորենացու հատուածը։

"...Եւ զկնի վեց ամսոց անցելոյ, յերեքասանն մեհեկանի, եւ երանելին Մեսրոպ փոխեցաւ յաշխարհէ ի վաղարշապատ քաղաքի, գերեզմանեցեալ եան զամենայն, որք զայնու ժամանակաւ էին առաքինիք։ Քանզի ամբարտաւանութիւն եւ մարդահաճութիւն է նոցա (var. երեք օրինակ՝ աւ է նոցա) վրա տեղի գտանել

պինդ հաւատով, եւ վարուքն (var. առաքինի վարուք) եւ զնդագունդ. բարեբարկ, ողջախոհ, սուրբ, մեկնեալ յամենայն իրաց չարաց. հեզաբարուք (var. հեզ բարուք) եւ խոնարհ սրտիւ, երկայնամիտ եւ մարդասէր, ահաւոր մեղուցելոցն, հրեշտակական գեմք, հրեշտակական եւ ուժգնամամբ եւ բարառով, եւ յամենայնի զբարոյն ուներ զնմանութիւն, որոց աշակերտեալն էր զծչմարտութիւնն է Քրիստոս Յիսուս — Յոյսոսիկ լիներ վասնման հայրապետին Սեղբեստրոսի...„ (էջ 699։ Ցեռ եւ Ցեռաւթիւն Սեղբեստրոսի պատմութեան, հրատ. Արժ. Հ. Բարոնի Սարգիսեանի, Վենետիկ 1893, էջ 7—8, — որից առել ենք եւ մեր յատակ բերած յատնդրին բնագրի համապատասխան հատուածը։)

"բանիւ պրոմպպոնաւցեալ„ — ἡ γὰρ ὑπεροφανεία καὶ ἡ ἀλαζονεία ἐν τοῖρ αὐτοῦ τρόποις χώραν ἔχειν οὐδαμῶς ἠδυνήθησαν = "վասն զի ամբարտաւանութիւն եւ մարդահաճոյութիւն աւ է նոցա վրա տեղի գտանել ալ սրեր կարացին„ — τῷ ἔργῳ ἅγιος = "գործով սուրբ.„ — հետաքրքրական է եւ τῷ σώματι ἐρρωμένος = "մարմնով արդեամբ։„, թէպէտ ἐρρωμένος իսկապէս զօրեղ, ուժեղ է նշանակում (ῥώννυμι), իսկ "արտաքայլեալ„ ձեւի համար գուցէ ἐκλάμπων կամ նման մի բառ սպասելու էր յոյն բնագրում ինչպէս որ փոքր ինչ ներքեւ յոյնի „ἐκλάμπειν" (էջ 35) հայը արդարեւ "արտաքայլել„ է թարգմանել (էջ 736)։ Նկատենք վերջապէս, որ Ընդարձակ վարքը ունի մի պարբերութիւն — "Երեսնամեայ ահայ ամաց էր... եւ բարեվայելչացեալ քան զբոլոր վիճակաւորսն„ —, որ պակասում է յոյն բնագրում (ըստ հրատարակութեան Արժ. Հ. Բ. Սարգիսեանի, էջ 7)։

Հիմա դառնանք Խորենացուն։ Սա՝ իւր Գրքի 67ոդ գլխում "Փոխումն յաշխարհէ Սահակայ եւ Մեսրոպայ երանելւոյ„, գլխաւորելով այդ երկու մեծ մարդոց գործունէութիւնը, տալիս է մեզ նոյն անձնաւորութիւնների բարոյական պատկերը — համառօտ՝ Սահակի մասին եւ փոքր ինչ ընդարձակ՝ Մաշտոցի մասին։ Արդ՝ վերջինիս նկարագրի մէջ գտնում ենք բացի փոխ է առել Խորենացին Սեղբեստրոսի Ընդարձակ վարքի վերոյիշեալ հատուածից՝ իրեն յատուկ ճարտարութեամբ յարմարցնելով Հռոմի հայրապետին վերագրած բարեմասնութիւնները Հայոց մեծ վարդապետին։ — պէտք է միւնոյն ժամանակ նկատել, որ փոխառած հատուածը այնպէս սերտ եւ անանջատ կապակցութիւն ունի ամբողջ 67ոդ գլխի հետ, որ անկարելի է բաց թողնել այդ տողերը՝ առանց զգալի կերպով վնասելու Մաշտոցի պատմութեան հետեւողութեանը եւ նոյն գլխի ընդհանուր բովանդակութեան։ Ապա ուրեմն ուրիշներից յետ ժամանակի ներմուծուած համարել նորան բնաւ կարելի չէ։

digitised by A.R.A.R.@

երբեք ոչ կոչոցին. այլ հեղ ի լաւագոյն ի քաջելիբարոյ ելոլ, ի երկնայնոցն զարքաբել սովորութիւնքդ զնոն քաջերից ցոյցանէր։ վասն զի բոյր տեսլեամբ հրեշտակական, մտաց ծնդական, քանի՛ զայնոսա, փարեալ ժուժկալ, հարեալ արտաքոյսլեալ, սաբաւի անեռա, իարբերգելոցութեամբ դեղ, հաստատել սոլիչ, յաստոյ համբերող (var. լամբր. — համբերոլոն), տիրել անիկնեռոր, սասասցանելով անյանիրոն։ — Այլ վասն զի դերարբ տաղաղութեան նորա ոչ քաւական եմ ասել, ի հանգիստ նորա նշխարացն գարձոյ զքեռ։ Որպէս լուայ ի բազմաց...» (Խոր. Պատմ. Հայ. Վենետիկ, 1865, էջ 270—271.)

Այստեղ արժանի են մատնդրութեան — խորենացու. «գերազանցեալ» բառը, որ գանում ենք Սեղբեստրոսի համառօտ վարքի համապատասխան հատուածում եւ որը նախադասել է հայ պատմագիրը[1] Ընդարձակ վարքի «բարեվայելչացեալ» երկայն ձեւին. — «մարդահաճութիւն» կարճ ձեւը՝ փոխանակ հայ թարգմանութեան «մարդահաճոյութիւն». — «երբեք ոչ» — կամ դիտմամբ փոխուած է «ոչ ուրեք» (οὐδαμῶς)-ի տեղ եւ կամ յետոյ սրբագրուած ընդօրինակողներից. — «մտաց ծնդական» չունի Ընդարձակ վարքը (եւ ոչ համառօտը), որովհետեւ նա՝ ինչպես տեսանք, չկայ եւ յոյն բնագրում. իմ կարծիքով, այդ՝ խորենացու յաւելցրածը պէտք է լինի, որին յատուկ են նման դարձուածներ, օրինակ «մտաց ծնդականութիւն» (պատմ. Հ. Ա. 3). — «բանիւք պայծառ» ակներեւ է, որ կոկուած է «բանիւ տրամապատրաստեալ» բառացի տգեղ թարգմանութիւնից (διαλάμπων), որ անշուշտ ներհակ էր եւ խորենացու կիրթ ճաշակին եւ՝ ընդհակառակը, տովորական եւ ընտել Ընդարձակ վարքի յատնամել թարգմանչին. հմմտ., օրինակի համար, եւ. «տրամախաուսա» կազմութիւնը, էջ 693. — «գործովք ֆոյթալ» նպատակով փոխակերպած է (— Ցոյնի եւ Հայ թարգմանչի «τῷ ἔργῳ ἄγιος» = «գործով սուրբ» ձեւից. — գարձեալ՝ խորենացու «ուսուցանելով անձանձրոյթ» չունի Ընդարձակ վարքը (եւ ոչ համառօտը), որովհետեւ՝ ինչպէս տեսանք, նա չկայ եւ յոյն բնագրում. այդ դարձուածը՝ ինձ թվում է, փոխ է առել խորենացին Փոքր Սոկրատից, որ գործ է ածում նոյն խօսքերը վերաբերութեամբ Ցովհան Ոսկեբերանին. տես էջ 498 — «անձանձրոյթ յուսուցանելն»։ — Ընդարձակ վարքի «Այլ վասն զի դերարբ նորա (Սեղբեստրոսի) դաղաղութիւնն ոչ եմ բաւական ասել, առ ի մանանուրա-կանսն նորա գործեցեալա դարձոյց զքեռս» — փոխուել է խորենացու մտ «Այլ վասն զի դերարբ տաղաղութիւնն նորա (Մաշտոցի) ոչ բաւական եմ ասել ի հանգիստ նորա նշխարացն դարձոյց զքեռս»։ Վերջապէս այն հանգամանքը, թէ Ընդարձակ վարքի մեջ հետաքրքրող հատուածում կայ մի պարբերութիւն «Երեսնամեայ հայ ամաց էր... բարեվայելչացեալ ի զբոլոր վիճակաւորսն» — որ պակասում է յոյն բնագրում եւ ընդհակառակը, նկատվում է խորենացու փոխ առած տողերի մէջ՝ «գերազանցեալ ի զամենայն, որ զայնու ժամանակաւ էին առաքինիք» — մեր կարծիքով ցոյց է տալիս ակներեւ կերպով հայ պատմագրի ուղղակի եւ անմիջական կապը Նիկոյ, մեր ձեռքը հասած Սեղբեստրոսի Ընդարձակ վարքի հայ խմբագրութեանից, որ համաձայն գրչագիրների յիշատակարաններին, Աբաս Գրիգոր Զորոփորեցու ձեռքով է կատարուել 678 թուականին։

Դառնալով այն խնդրին, թէ խորենացին, ինչպէս տեսանք, իւր պատմութեան ընթացքում, նոյն իսկ համառօտ նկարագիրների մէջ, յիրաւի, սիրում է օգտուել այլ եւ այլ բովանդակութեամբ բոլորովին տարբեր աղբիւրներից՝ քաղելով նոցանից կարճ ու ազդու ասացուածներ. — դարս փայլուն ապացոյցը կարող ենք գտնել նոյն 67[րդ] գլխում։ Ս. Սահակի նկարագրում խորենացու մէջ բերած գեղեցիկ ասացուածը — «պարարեաց (Սահակ) ղպարիէրն, պարարեաց է կաղնեանին[1], փոխանարարեաց զքեռս» ամբողջապէս առած է Գրիգոր Նազիանզացու մի ճառի հայ թարգմանութիւնից. «...Եղիցուք մաքուր Արարչին, պարարեցուք ղպարիէրն, պարարեցուք է կաղանին, փոխագրեցուք[2] զքեռս»։ (Տես «ի բանս

---

[1] Եթէ Հ. Մեսրոպ առարկէ, թէ «գերազանցեալ»ը Փ. Սոկրատ է առել խորենացու՝ հետեւելով սոքա «մեծ եւ անպայման հեղինակութեան», — մենք կը հարցնենք՝ ինչու հապա նա, Փ. Սոկրատը, բոլորովին անտես է անում իւր համար «կանոնական նշանակութիւն», ունեցող հայ պատմագրին եւ այնպիսի կարեւոր կէտում, որպէս Մաշտոցի (կամ որ նոյնն է, Սեղբեստրոսի) հրաշալի նկարագիրն է։

[1] Խորենացու «ի կաղնեանէն» ըստ երեւութին սխալմամբ է առաջացել գրչագիրներում՝ փոխանակ «ի կալնեանէն», ինչպէս ունի եւ Գր. Նազիանզացու բնագիրը՝ «ἡ κλῆσις» կալանն։ Տես նոյն ճառի բնագիրը՝ Migne, Patrolog. T XXXV, p. 1050։

[2] «Փոխագրեցուք զքեռս» բառացի բնագրի «μεταθώμεθα τὴν ζωήν» է. խորենացին դիտմամբ, թէ անգիտակցաբար, «փոխագրել»-ի է փոխել, որ տարբեր նշանակութիւն ունի։

digitised by A.R.A.R.@

եւ ի հաւասարեցուցիչն», Հռոգր. Վիենն. Մխիթ. Nr. 217, թղթ. 171՝.)

Նոյն իսկ Ս. Մաշտոցի վերը յիշած նկարագրից մի քանի տող յետոյ՝ խորենացին իւր «զպարկեշան զայն մարմին կ՝ նոխ տուն զմոն կըրեալ է դեռելոխեան», աջող նմանութիւնը քաղում է դարձեալ Գր. Նազիանզացու ճառերից. «մանր ոսկերք կ՝ նոխ տուն զմոն կրեալ է դեռելոխեան» (Տես Նշոյլ, քննասէր, Բ, էջ 11.)

Եւ այսպիսի ծաղկաքաղը մանաւանդ թարգմանական գրուածքներից, ինչպէս վերը նկատեցինք, խորենացու սիրածն է, նորա բնորոշ մատենագրական եղանակն է, որ տեսնում ենք նորա պատմութեան համարեա ամէն մի երեսում, — այն է՝ Հայերին ամենեւին վերաբերութիւն չունեցող, բայց որ եւ է կողմից հետաքրքրական նկարագիրները, ասացուածները անգամ եւ կարճ դարձուածները յարմարցնել իւր հայրենակիցներին, իւրնկարագրած անձնաւորութիւններին։ Այսպէս՝ Եւսեբիոս կեսարացու Քրոնիկոնի հայ թարգմանութեան մէջ գտնուած աւանդութիւնը Տեմոնի որդու Մեհոնի Տրովադացւոց Պրիամին օգնութեան գնալու եւ այնտեղ հելլէններից սպանուելու մասին, — հայ պատմագիրը առանց այլ եւ այլի վերագրում է հոյ Զարմայրին։ — Դալլիսթենի հայ թարգմանութեան մէջ բերած Դոլեհի ու Աղիսանդր Մակեդոնացու նկարագիրը Պարսիկների յաղթուելուց յետոյ, խորենացին պատշաճեցնում է հայ Արշակունի Երուանդին եւ Աբդոլոնին։ — Բ. Մակաբայեցոց գրքում յիշուած ալեքսդր եւ առաքինի Եղիազար Հրէի նկարագիրը, որպէս եւ Սողոմոնի Առակների մի երկու ասացուածները, խորենացին յարմարցնում է Սոֆոս Բոքքոռոնան եւ այլն եւ այլն։ Նոյն ուղղութեան շնորհիւ՝ հայ պատմագիրը օգտուել է եւ Սեղբեստրոսի Ընդարձակ վարքից՝ Սեղբեսոբոսի նկարագիրը Մաշտոցի յարմարցնելով։

2. Անցնինք Սոկրատի հրատարակչի երկրորդ եղբայացութեան։

Արժ. Հ. Մեսրոպի ապացոյցների տարօրինակութիւնը այն է, որ՝ հայ պատմագրի վարկը պաշտպանելու համար, նա սովորաբար մատնացոյց է անում «մեր ձեռքը չը հասած», ոչինչ-ներ, մի կողմ թողնելով բանաւոր պատճառները եւ աւելի հաւանական երեւոյթները։ Խորենացին՝ նորա կարծիքով, օգտուել է Սեղբեսոբոսի Վարքի «մեր ձեռքը չը հասած» հայ թարգմանութիւնից. — Խորենացին օգտուել է Աթենի էջերի պատմութեան նոյնպէս «մեր ձեռքը չը հասած» մասերից՝ Մ. Կոստանդինոսի հրաշալի դարձի, Ս. Նունեի եւ այլոց մասին։

Ս. Սեղբեսոբոսի Վարքի «մեր ձեռքը չը հասած» մի այլ (երրորդ) հայ թարգմանութեան ենթադրութիւնը այնքան անհիմն է թվում մեզ, որ մենք աւելորդ ենք համարում դորա վերայ երկար կանգ առնել։ Խնդիրը այստեղ երրորդ կամ չորրորդ թարգմանութեան հաւանական լինելու մասին չէ. Խորենացու պատմութեան մէջ հետաքրքրող հատուածների նմանութիւնները բոլորովին համաձայն են յիշեալ Վարքի երկու մէջ հատած հայ թարգմանութիւններին. մենք այդ տեսնում ենք, մենք շօշափում ենք, որովհետեւ դոքա մեր առաջն են դրուած եւ մենք միջոց ունինք համեմատելու դոցա եւ ստուգելու։ Բայց ի՞նչ կարելի է ասել մի երրորդ թարգմանութեան մասին, որի գոյութիւնը աւելի քան կասկածելի է, եւ ինչպէս կարելի է լուրջ կերպով հիմնուել այդպիսի երեւակայեալ գրուածքի վերայ, որպէս անում է Հ. Մեսրոպ։ Մենք կարծում ենք, որ վիճելի խնդիրը լուծելիս՝ կարելի չէ դիմել նոյնչափ եւ աւելի վիճելի ու կասկածելի պարագաների, որից միայն մթութիւն եւ ամէն տեսակ շփոթութիւն կ՝առաջանայ, այլ հիմնուելու է կարելոյն չափ հաստատուն կռուանների վերայ, որպէս զի դոցանից հետեւցրած եզրակացութիւններն էլ կարելոյն չափ մտ լինեին ճշմարտութեան կամ գէթ հաւանականութեան։ Քննադատը այս միշտ պէտք է ունենայ ի նկատի։

Ագաթանգեղի վերաբերմամբ դիտելու է, որ խորենացու Բ. գրքի 83 եւ 86 գլուխների վերջում յիշածը — «որպէս (Համառօտ) ուսուցանէ քեզ Ագաթանգեղոս», — տեղիք է տուել բռնազբաս մեկնութիւնների։ Այդ երկուսից՝ առաջին գլխում խորենացին վկայութեան է կոչում Ագաթանգեղին՝ էքրե՝ ոչ թէ իւր պատմած առասպելի (եղիբանդական քորոտութեան եւ անմեղ մանուկների արեան մէջ լուացուելու մասին), որ մի միայն Սեղբեսարոսի Վարքն է հաղորդում, — այլ նախ՝ առ հասարակ նոյն 83-րդ գլխի ընդհանուր բովանդակութեան, այն է՝ Կոստանդինոսի թագաւորանալու, խաչի յաղթութեան նշանը նորան երեւալու, ճշմարիտ Աստուծն հաւատալու մասին, եւ մանաւորապէս նոյն գլխի վերջին նախադասութեան — «զբռնաւորսն ամենայն բառնալով Աստուծոյ յերեսաց նորա (որպէս համառօտ ուսուցանէ քեզ Ագաթանգեղոս)»,

digitised by A.R.A.R.@

Եւ իրաք, Հայոց դարձի հեղինակը իւր ՃԻԵ գլխում համառօտ պատմում է Կոստանդիանոսի թագաւորանալը, Ճշմարիտ Աստուծոյ հաւատալը, խաչի յաղթութեան նշանը երեւալը եւ եկեղեցի ու վկայարաններ շինելը՝ մանաւորապէս շեշտելով "պիղծ եւ անօրէն„ Դիոկղետիանոս, Մաքսիմանոս, Մաքսիմանոս, Ղուկիանոս եւ Մաքսենտիանոս բռնակալների "ի միջոյ„ ընկելու մասին։ Խորենացին ի զուր է ուրեմն Ագաթանգեղի "մեր ձեռքը չը հասած„ մասերի վերայ յոյս դնելը. հրաշքներին շատ հակամէտ Հայոց դարձի պատմիչը ըստ երեւոյթին նուիրելով իւր գրուածքում նաեւ Կոստանդիանոսի դարձին, եւ ոչ մի խօսք չէ ասում արկում Խորենացու նկարագրած նոյն կայսեր հրաշքի մասին, որը հարկաւ առիթ կ'տուներ նա, Ագաթանգեղ յիշելու՝ գէթ համառօտ, եթէ իմանար եւ կամենար յիշել։

Պէտք է ասել, որ նոյն այդ ՃԻԵ գլխում չէ էլ նշմարվում որեւէ հետք գրուածքի ընդհատման, կրճատման կամ աղաւաղման։ Իսկ ենթադրել, թէ այդ գլխից զատ Ագաթանգեղ նուիրած է եղել Կոստանդիանոսի դարձին մի այլ պատմութիւն, որ՝ իբր թէ "մեր ձեռքը չէ հասել„, մեր կարծիքով՝ կատարեալ կամայականութիւն է։

Վերջապէս, Խորենացու նոյն 83-րդ գլխում գտնուած մի քանի բնորոշ բառերն ու դարձուածները — օր. "որդիացեալն„ (Կոստանդիանոս), "յառաջաբերեալ„, "մարդասիրել„ — ընդհանրապէս անսովոր լինելով իրին՝ Խորենացու ոճին, օտար են միանգամայն եւ Ագաթանգեղին եւ՝ ընդհակառակը, յատուկ եւ ընտել Ս. եւ Փ. Սոկրատին եւ նոցա կից՝ Սեղբեստրոսի Ընդարձակ եւ Համառօտ վարքերին։ (Հմմտ. էջ 8, 166, 763, 766։) — Այս է պատճառը, որ Խորենացու հաղորդած առասպելի նկարագրութեան թոռոյթ նմանութիւնները յատկապէս Սեղբեստրոսի Ընդարձակ եւ Համառօտ վարքերի հետ՝ այլապէս կարելի չէ մեկնել, եթէ ոչ հայ պատմագրի փոխառութեամբ. Խորենացին օգտուել է անշուշտ այդ երկու վարքերից։

Որպէս զի այդ մասին էլ տեղիք չը տրուի ոչ եւ է տարակուսանքի, առաջ կը բերենք Խորենացու 83-րդ գլուխը՝ զուգընթացաբար Սեղբեստրոսի Ընդարձակ եւ Համառօտ վարքերի հետ, նոպրպէրով նշանակելով փոխառած բառերն ու դարձուածները հայ պատմագրի եւ իւր աղբիւրների համապատասխան հատուածներում եւ ղեպրով՝ նոյն վարքերին միայն յատուկ համանման մասերը։

---

1 Իմ „Армянскій эпосъ" հեռագրութեան ապագրութեան ժամանակ՝ ընտենալով ձեռքիս Սեղբեստրոսի Ընդարձակ՝ վերջը ամբողջութեամբ, ենթադրել էի (էջ 24), թէ Խորենացին իւր 83-րդ գլխի համար օգտուել է յատկապէս Փ. Սոկրատից։ Այժմ՝ Սոկրատի լեզուական հրատարակութիւնը լոյս տեսնելուց յետոյ, ձեռնհաս եմ ուսումնասիրել իմ առաջին եզրակացութեան ճշմարտութիւնը։

ԽՈՐ. Բ., 83.

... Ընդ նոյն առաւօտս լինին հարուածք եւ Մաքսիմիոս գրգռին Դիոկղետիանոսն ի Նիկոմիդիոյ, փնտռանելով նմա Կոստանդիանոսի Կիսարի, որդւոյ Կոստանդեայ թագաւորին Հռոմայ, որ ուշ էր ի գրգռելն Մաքսիմիանոսի, այլ Հիւսիսոյ գտանէին ինքեաւ։ Այս Կոստանդիանոս բարեկամացեալ ի Հարսանիսն ընդ Յրդեանոյ մեր թագաւորի։ Եւ յետ ոչ բազում ամաց մեռեալ Կոստանդ, փախանորդ նմա առաջի Դիոկղետիանոս զեղերին որդի եւ զիր գրգռեցուն Կոստանդիանոս։ Սա յառաջ քան ըզթագաւորելն, մինչ դեռ կիսոր էր, գաղտեալ ի մարան եւ գրգռանիկսի մեծաւ ՆՆՊՄՀ, երթեալ նոցա նմա ի քաւն խուլ առա-

ՍԵՂԲԵՍՏՐՈՍԻ ԸՆԴԱՐՁԱԿ ՎԱՐՔԸ
(էջ 708—27)։

"... Յաւնսոկիկ ապա ժամանակս՝ Կոստասա՝ Հայր Մեծին Կոստանդինոսի թագաւորի զոլով տակաւին տրիքունս եւ զաւբաւոր յոյժ. ելն ի Հռոմէոյ առ ի պատերազմ Սարմատացւոց։ Եւ յաղթել եւ դարձեալ անդրէն էլ ի պանտուկուզ ուրս 38, յորում էր աղէրկ մի յոյժ զեղեցկակերպ, անուն Հեպլին. նմա արփացեալ Կոստասա, ՆՆՊՄՀ ընդ նմա... Եւ նստեալ ի Հռոմ յաղթութեամբ թագաւորաց։ Եւ առ իւր կին զբաւորն Մաքսիմոսի թագաւորի, յորմէ ունէր որդի անմիտ... եւ խորհուրդ արարեալ ընդ սինկղիտոսին յաղագս զտանելոյ մանուկ զեղեցկակերպ եւ իմաստուն, բայց որբ. ածել զնա ի պատգամ զի ի ձեռն երանոյ իմոյ զնա հանեալ որդի կոչեցից... Եւ զայս ասացեալ, ոչ գիտէր զառ ի գտանիկն ծնիլն մանուկն ի պանդգիսոյ առ. ի Հիլիենոյ, եւ անուն մանկանն կոստանտինոս։ (Հեռաւուտ է մանկան գտնելու մանրամասն պատմութիւնը)

"... Իսկ թագաւորին հաւանեալ...։

Դիրկս արկ զմանկամն Կոստանտինոսիս. եւ... նախանձնունեաց զնա ի կայսերական պատիս։

ՍԵՂԲԵՍՏՐՈՍԻ ՀԱՄԱՌՕՏ ՎԱՐՔԸ
(էջ 708—27)։

"... Ընդ ժամանակս ընդ այնսոիկ Կոստասա տրիքուն զոլով եւ զօրավար եւ յաղթող ի պատերազմին Սարմատացւոց, դարձաւ բազում ասարաւ եւ երեւելի փառաւ։ Եւ եկեալ ի քաղաքն ի պանտուկի եւ տեսեալ աղէրկ մի զեղեցիկ, իմաստուն, կամեցաւ ՆՆՊՄՀ ընդ նմա ի գիշերին... եւ նստեալ ի Հռոմ թագաւորեալ բազում եւ երեւելի փառաւ։ Եւ առ իւր կին զբաւորդ Մաքսիմոսի թագաւորին, յորմէ ունէր որդի անմիտ... եւ արար խորհուրդ ընդ սինկղիտոսին, որ Խորհրդական կոչի, զի գտցի մանուկ մի իմաստուն զեղեցիկ յորդեգրութեան որպէս թէ առ ի յինէն իցէ ծնեալ... (Հեռաւուտ է մանկան գտնելու մանրամասն պատմութիւնը։)

Ուրախութեամբ տարան լիներ... եւ զիրկս արկեալ համբուրէր զորդին... եւ տեսեալ զառաջադիմութիւնն պատանեկութեանն թագաւորին եւ սիրելիացեալն նախանձունն զնա ի կայսերական պատիս...։

digitised by A.R.A.R.@

տիկին յիբիթի պարտաճակեալ էրալ (var. ասանեզ ասանեզ) ասէ. Այսոր յոլիիս. զոր

. . . յոլիսի ժամանակի լինի մարտ պատերազմի առ Հիւսնազանս: Կոստանդինու յոյժ պատանեակ գունով եւ առեալ նուազեալ ոչ սակաւս. սպառազինի հակառակ Բիւզանդացւոցն . . . իսկ Բիւզանդացւոցն տեսեալ զնա պարծիլ, գուսարեցան դարձեալ ասալ պատնազամ առ վարիւն: Եւ Կոստանդինոս կայար էր գրգռիլս եւ յոյժ վրդովեալ: Տեսանէ ապա ի գիշերին յոլիսի, յորում ՆՆէիբ. տեսիլ ահեղեւանի յերէին. իսկ վասնզի եւ գերապայծառ ուներալ վերնեիբ *յոտեիլոց* պատ յոլիիս: Իսկ նորա յարբանալ եւ յիշեալ զտեսլականն, ինքնուրեանն եղեալ, կոչէ զքուրմսն հեթանոսաց եւ հարցանէ զնոսա. Թե որոյ Աստուծոյ է նշանս այս: Եւ նոքա ասեն. Նշանս այս ոչ է որոց ի վերայ երկրի աստուածոց, այլ որ յերկինս գոյ Աստուած. քանզի իսաշանն ամենայն զքաղաքս է, զորս մեր պաշտեմք . . . Հաստատապես կայսրն Կոստանդինոս առ ի քրիստոնէս հեթանոսաց . . . Տրամայեաց ոստէլ զարմանալի խաչին որ գունակ երեւեալս նմա հանդերձ որ ի նմա* ասատղական վերնագրութեամբ եւ տանին առաքի նորա: Եւ երրորդ անգամ ճանաչեալ պարծիլս յոլիիս, ի հիւանդացեալն առեալ զամենայն տեղիս նոցա . . . .

Եւ արարեալ Դիոկղետիանոսի թագաւորի անձինան, կոչէ ի միասին գուսարեալ զսիւնկրիտոսն . . . ասելով. Որք Սինկղետասարք, պարտ է համարձակութեամբ առաջի մեր ասել զասն Կոստանդինի յոյժ, որքանդեր Կոստաց խրատարին հաւատացեալ է . . . զարբանալ յանզնոյ եւ մարտիկ . . . Զամենայն ահա զնա փիսոյոցասցուն ի գրատարս իմ Մարտիկիս . . . եղեն ապա հարուածս կոստանդինի եւ Մարտիկիս զուսարեալ ապէս եւ գերապայծառարար . . . Ցայժմայ եհաս զրոյց առ Կոստանդինոս զասն վասնզանին կոստաց հաւր իւրոյ ի Հռոմի եւ երրեանց յաշերդեալց զթագաւորութիւն նորա:

Իսկ կին նորա վրդովեալ զնա հակառակ քրիստոնէից . . . Ուստի Ս. Սեղբեստրոսի բացորդեալ է քաղաքէն՝ յատանեալ Սեղբաստինոսին ասելոյ . . . իսկ Կոստանդինոս թագաւոր զՄարտիկիս Դիոկղետիանոսի գուսարդ ունելով լին, գիտացաւ ի քրիստոնէից առաջէր. եւ ի ապա եղեալ ասելոյ քրիստոնեութիւն ընդ ինքն ասելոյ. ասատ ասեալ ասացեալ Սեղբինան կոխորդ է Մարտիկիսն Բիւզանդ. եւ ոչ միայն նոքա, այլ եւ որք ի Պարսից ասեալք եւ փրդեալ բժշկական գալով արշեանց. ոչ կոխորդին ասելն նմա: Երեւեցան ապա ամենայն ի գրոց ասասարին ասելոյ. պարտ է ասասալ լինել է ասասարին եւ. լնուլ զնա արիասի ասասալան մանկանց, յորում կիրթ գալով եւ եղեալ լոսանան զնա, եւ այնպէս կարել մարքուեեան հանդիպել: Եւ ահա առաքեալ զասան ընդ բոլոր գուսառ, քաղաքին մանկանց ասելն. եւ ի սահմանեալ ասատ երթեալ է թագաւորէն ի տանարն էին պարարասասալ, որք կանչէին զմանկանն զնոսայ: Պատահեցան եւ գրի մանկանցն, ասալ մեծաս զասելով արասասալ, հերարեալ մերկացեալ գկիսով, եւ լցեալ կոխնազալ ոդրովք, որպէս զի զամենայն զասդս որք երգականն ձայնէր ընալ . . . Հարցանելով ապա թագաւորին, թե զինչ այն էր. ասասեալ թե մարք մանկանցն, զոր հրամայեալ զնուալ, են յաղագս ընչեանց մանկանց: Եւ պարտեալ թագաւորն ասասրութեամբ զարքայի գոռնոց, ակսաս արասասալ եւ մեծաս ձայնէս ասելն . . . Դարձեալ ի ծարել պատասեմ փան զլիս առագրութիւն զանապական տգոյոյն փրդոնիին . . . Եւ ի նմին զիշերի տեսիլ տեսանէ թագաւորն, յորում երեւեցան նմա տուրբ սուրբ պատերազմի քրիստոսի Պետրոս եւ Պաւլոս ասելով. մեք եմք Պետրոս եւ Պաւլոս առաքեալն առ ի յԱստուծոյ ասալ. քեզ փրկութիւն խորհրդակցութեամբս, զի առաքեսցես առ Սեղբեստրոս եպիսկոպոս որ առ ի քոյոյ հաւատանաց երկուցեալ ի յայրի, որ է ի լբրենի Սեբաստիոնս խոհասալոյ,

Եւ յետ այսր ասենալոյն լինի մարտ ընդ հեղվեալսիսն եւ ընդ Հիւսնազանս: Եւ առաքէ թագաւորն Կոստանդին զրգռին իւր Կոստանդինոս ընդդէմ նոցա ի պատերազմ բազում զրգռ, եւ յաղթեալ հաղթին Բիւզանդացիքն զզրսն Կոստանդինոսին: Եւ յոյժ զրգռիլ եւ սարասալս սեալ հոգալս. թէ զինչ արասցէ առ վարիւ ի պատերազմն: Եւ արասեալ Ղէնէր, եւ տեսանէ ի տեսեսալս գիշերին վերնագրէ ասատղական (var. ասատղական Նշան) խաչ, եւ բան զի ասէր յոյժ մեծեմ: Զայս նշանս արասրեալ ասացի, յաղթես պատերազմիդ եւ ալ մարտից: Եւ ի խնդութենէն զարթեալ. եւ կոչեաց անգեն վարդապետ զքուրմն հեթանոսաց եւ պատմեաց նոցա զտեսիլն եւ ասէ ցնոսա. որոյ Աստուծոյ է նշանս այս... Եւ ասեն, ոչ է նշանս այս մեր աստուծոցն, այլ իսաշանն քրիստոսի . . . Եւ հաստատաց կայսրն Կոստանդինոսն եւ հրամայեաց ասել զքրիստոսն խաչին, որպէս ցուցաալ նմա ի տեսլեանն: Եւ եղեալ ի վաղորդի պատերազմ սասալի, եւ հրամայեաց զնչան խաչին կայսրն Կոստանդինոս առաջի իւր եւ զրոցն [մ]տանել ի մարան: Եւ բրբեալ խմբեցաս մարան, պատեցաս Մաքսիմիանոս եւ զրոք իւր Հիւսնազանցիք... եւ առ սասալ բազում է եւ զաշխարհն յինքն գրաւեաց:

Եւ սեռեալ Դիոկղետիանոսի ասկարքսի զյաղթող հաստատութիւն Կոստանդինոսի յոյժ, խորհեալս արարեալ ընդ սինկղիտոսին, ֆեսոյացացանելով զքաղաք իւր Մարտիկիս . . . յարդարելին զհրամանի ըստ օրինի թագաւորաց գերապայծառ եւ ասասարարար. եւ բազում փառք ամենայնի զրգռեցեալ էոր եւ զթագաւորութիւնն եւ զամենայն ինչս նոցա խոտասալաս ասալ . . .

Ապա հասանէր համբաւ մահու Նուսանդեայ ցօր կոստանդինոսի կայսերի: Եւ ասեալ գկին եւ զորս իւր գնացեալ եկեն ի Հռոմի եւ թագաւորեաց փոխանակ ցօրն իւրոյ ի Հռոմ...:

Բայց հրազարեալ է խուզն էոյոյ (var. խորքն) Մարտիկիս ի գրարերն Դիոկղետիանոսի եւ արար հուլանանութիւնս Կոստանդինոսս ի ձեռն կնոջ իւրոյ պատրեալ. եւ թաքանկ եղեն Վեյտ եւ խոստովանեալ. արշամարտ հեղալ. զլաք ասալեանս եւ զմանս . . . Ալան որոյ . . . Սեղբեստրոս հայրապետն ասեալս զուսս եկեալ-զան եւ խոյս տալլ յանապատս սեզի ի Սեբասիոն լեռանն . . . Ցայժմայ եկեալ հանդերձալոն քաղաքաբնակն զքաղաք Մարտիկ թագաւորին Կոստանդինոսի ապրանքներ, որպէս ի խրատ նմա ասելոյ լեալ. վասն որոյ ասելոյն խոհարքն եւ ասիրարանն թեկելի ալ լոսոյնն օգնեալ, եւ. ոչ Պարզեալ եւ Հայոց: Եւ նա սարասալս սեալ սրասէր: Ընդանալին փարզ է գրեալ հրաստարանալ յոլովեալ գնալ գնալ յասարգանս մեհենից իւր լսանալ Վրէ ասիրարանն եւ ամենայն ասալեանալ աւէին: Եւ անգէն վարդապետի առաքեցան գնալոյ թագաւորին ընդ աշխարհն ամենայն, ժողովել մանկունս անմեղս անվասանալ ի ծնանալոյն ի տանար մեհենիցն առ ի գնալոյ յասարանսն: Եւ մարդ գնին մանկանցն եկեալ լալին եւ աշխարհին զնոյ մանկանցն: Եւ լսանալ թագաւորին զնոյն կոծոյ եւ աշխարանաց ասե ցմարեանալոյսն. զինչ է այս զոր լսեմս. եւ ասեն. մարդ տղայոցն որ առ ի զնուսին ժողովցան մարդեին գթով ազնխարչալք ... Եւ զզլաքաս թագաւորն եւ եալոց գասանալս եւ ասէ. քաս լեցի ինձ թերեցուել զմանկունս անմեղս որոշեալս ինոնոցանց ի մահ, թեպէտ եւ ի մահ ձգէ զնս անատ բարուանութեանս եւ անբժշկելի մեռամ ...:

Եւ ցայմմ զիշերի տեսանէ թագաւորն Կոստանդինոս ի տեսլեանն զարարչին Յեսուս զՊետրոս եւ զՊաւլոս, որք ասէին ցնա. առաքեալ լլաստոյոյ զարդանութիւն քարոզել եւ բժշկութիւն մարմնոյ ախտից... եւ. արդ առաքեա կոչեա զԱրեքեպարս, զանուանս Հոռոյ զան ի քէն հաւանանն, որ կոչ է լբրենի Սեբասիոն լեռան ասդ, որ եկեալ խոսեալ բանս ընդ քեզ. փրկութեան, եւ

տիկին յիբիթի պարտաճակեալ էրալ (var. ասանեզ ասանեզ) ասէ. Այսոր յոլիիս. զոր արարիալ սիւգիոյն եւ յասանալանեալ. յոգիլիոյ պարիբարալսն:

[Հմմտ. վերաբերեալ հասանանեզ. "Ընդ նոյն ասուրս լինին հարանիսի եւ Մարտիկիսոյ գրարերն Դիոկղետիանոսի ի Նիկոմիդիայ, ֆեսոյանալալ նմա Կոստանդինոսի Կոստանդինոս՝,ն]

Բայց յեռոյ հրազարեալ է խուզն էոյոյ Մարտիկիսոյ (var. Մարքսիմիոյ), ի գրարերն Դիոկղետիանոսի, յարբոյց հաստանանս եւ զքաղաս ելեալ, թեպէտս ելեալ զնոյ. եւ. զնոյ հաստանանս ի գրարերն Դիոկղետիանոսի գրարերն ընդ ինքն ասելոյ. Մարքսի ազանելոյս ազանելոյ զանանելոյ զանանելոյ զան

կենտրոնում սատանային է ձեռն Սիդիոպոլսի եպիսկոպոսի Հռոմայ որ ի Նմանի թափոխել էր ի Սարոպիան (var. Սիրոպոդիան կամ Սիրոպիտան) կոչուն. յորմէ եւ ալակերտաւել Հաւատաց, զբաւականն սմանչան բանիւղով Աստուծոյ յերեսաց նորա, որպէս համաւատ ուսուցանէ քեզ Ագաթանգեղոս։

գնա հանդերձ պատուով արագեցիս առ քեզ գալ։ եթէ խրատու նորա անսացես, ցուցանել քեզ կարասցէ սատանն բարեպաշտութեան, յորում լսասցիս զարդս վիրացն բացամաքեցեալս, եւ ողջ եղեալ կենացն արժանասցիս։։։

լսասցի ի հոգեւոր սատանէն զհնութիւն մեզաց քոց եւ զբորոտութիւնդ քո սրբեսցի իբրեն եւ կեանս եւ առողջութիւն քեզ տացէ։։։

Ա.յս համեմատական աղիւսակից տեսնում ենք, որ աւելի քան 160 դէպքում Ընդարձակ եւ Համառօտ վարքերը խառնում նմանութիւն ունին իրարու հետ՝ կրկնելով միմեանց խօսքերը. այդ թուից՝ միայն $^1/_3$ դէպքում նմանութիւն ունի խորենացու 83տդ գլուխը նոյն վարքերի համապատասխան հատուածների հետ, իսկ մնացեալ $^2/_3$ դէպքում (շատերով շարուած խօսքերը) բոլորովին նման չէ նոցա։ Այս հանգամանքը՝ մեր կարծիքով, ցոյց է տալիս մի կողմանէ՝ մէկ վարքի անմիջական կախումն միւսից (եւ յատկապէս համառօտինը Ընդարձակից) եւ միւս կողմանէ՝ խորենացու լեռնէ կոխոմն միանոյ երկու աղբիւրներ էլ։ Վերջին հանգամանքը հաստատվում է նաեւ նորանով, որ "Հայոց պատմութեան" մեր ուսումնասիրած գլուխը 20 դէպքում[1] նմանութիւն ունի թացառապէս միայն Ընդարձակ վարքի հետ եւ 14 դէպքում[1] միայն համառօտի հետ՝ չը հաշուելով վերոյիշեալ նմանութեան դէպքերը միաժամանակ երկու վարքերի հետ էլ։

(Մնացեալը թող անիծ։) Գր. ԽԱՌԱԹՈՒՍ

ԸՆԴԱՐՁԱԿ ՎԱՐՔ	ՀԱՄԱՌՕՏ ՎԱՐՔ
Ի գահն ելեալ Ի՛ն Ամենայն զբ. տան.	Ընդ ժամանակս զբ. տան.
Ամ ի Հեւլենոյ	Բոյոյ հրապարեալ ի Թանկն Իւրմէ
Ցեսեալ զնա պարարեալ	Զբոլոր մարմին թ ...տապ.
Այսոս յոգեմոյ	Խոցեր
Ցուցեալ գարեպարտման	Ի գլխոյ հրապարեալոյ
Ինձն եղեալ. բորոտութեամբ	Զնոսա յատանան ի Երմ
Ըստ թեղրի ընթալեալ մարմոյ։	արեմէ լսանեալ։
Ոչ կարացին օգնել նմա	Եւ սրբեալ ի քէն
Քուրմք սմանէ	Զբորոտութիւն։
Բազմութիւն մանկանց	
Կոչանապէզ ողորմք	
Քան զլեռ... երկնութեան	
Սեղբեսարտս եպիսկոպոս	
Ի լերին Սերապտենս թաւոյսալ։	

ՅՈՒՅՆԱԿ ՀԱՅՏԵՐԷՆ ՁԵՌԱԳՐՈՒԱԾ ՍՈՒՆԵՑԱՐԵԱՆ ՎԱՐՔԱՐԱՆԻՆ Ի ԿՈՐԻՆ

(Շարունակութիւն։)

33.

ՃՈՌԱՎԱՃԱՌՔ

ԺԶ—ԺԷ դար։

Թուղթ 269. էջ նշանակուած չէ։ — Մեծութիւնն՝ 18 սմ. երկ. 14 սմ. լայն. 6 սմ. հատ.։ — Նիւթ՝ թուղթ։ — Գնչամ կաշեպատ փայտ։ — Գրութիւնն՝ երկսիւն՝ իւրաքանչիւրը 15×4.5 սմ., մինչեւ լուսանցք 1 սմ., մինչեւ բոլորգիր։ — Վերնագիր եւն կարմիր։ — Դանդարկ թուղթ 1 էջ։ — Զարդ, պատկեր չունի։ — Տող 31։ — Գրիչ Նսայի աբեղայ։ — Ժամանակ, թուական անծանօթ։

Կը պարունակէ Ա. Բառգիրք՝ 53 թուղթ, ունի հինգ մաս. Ա. Հայերէն բառեր՝ 29 թուղթ. որու սկիզբը օտար գրչէ "Ցիսուսի քրիստոսի նուռատ ծառայ սարգիս վա" եւ վերջը "Եւ զեսայի գծող սորա սիշ"։" Բ. Բառ եբէրայեցի 11 թուղթ՝ որու վերջը "եւ զնա զանարժան աբեղայս զեսայիս յիշեսա եւ գոս յիշեալ լեսիս առ քս ամէն։" Գ. Այս բառ Յոհաննէսի է գրս յայտնէալ. (մեծ մասը Յոյն-Հայերէն՝ ապագայ, բացարձակ, երգասացութիւն եւայլն) 4 թուղթ՝ որս տակ. "քրիստոսի ասուածոյ մերոյ փառք։" Դ. Բառ Գալենոսի բժշկապետի՝ 4 թուղթ։ Ե. խառն բառեր 5 թուղթ։

2. Համանիշներ հինգ թուղթ. վերջը գրուած "Եւ քի փառք յաւիտեանս։"

3. Նշանագիր անուններ, բառեր եւն. 16 թուղթ։ Ասոնց մէջ առաջին գրչէ. "Եւ զնս բազմամեղ ծառայս ասուածոյ զեսսի աբեղայս յիշեսչէք ի քրիստոս Ցիսուս տէր մեր միով ասուուած սղորմիս եւ ասուուած ձեզ ողորմսցի յիշողացդ ամէն։" "Եւ զնուռատ գծող սորա զեսսայի անարժան աբեղայս. յիշեցէք ի յաղաւթս ձեր ով որ կարդայք եւ աւգտիք ի սմանէ թողութիւն խնդրեցէք ինձ եւ ծնողաց իմոց եւ որ զամենեն ասեն ամէն։"

Բ. Գործք Վարդանայ Վ.ի եւ այլն։

1. "Խնդիրքս եւ հարցմունք մեր այսչէի անուիրեալ եպիսկոպոսին ի մեղաւորս վարդանայ։ 19 թուղթ՝ որս վերջը՝ վասն գժոխոցն եւ անքուն որդանցն, զի չէ սուտ որպէս կարծեն ոգէկոք